

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 57/2

29 նոյեմբերի 2013 թ.

Քննարկվեց <Առմա Հաուս> ՍՊԸ 18.11.2013 թ-ի բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 16.07.2013 թ-ի թիվ 2118764 ստուգման ակտի դեմ:

Քննարկման ընթացքում նախ նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 21.08.2013 թ-ի նիստում քննության է առնվել <Առմա Հաուս> ՍՊԸ 23.07.2013 թ-ի բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 16.07.2013 թ-ի թիվ 2118764 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի <ա> ենթակետի դրույթներով ընդունվել է թիվ 40/2 որոշումը, որի համաձայն <Առմա Հաուս> ՍՊԸ 23.07.2013 թ-ի բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցվել է:

Նշվեց նաև, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ պետի 21.06.2013 թ-ի թիվ 2118764 հանձնարարագրի <Առմա Հաուս> ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված), ինչպես նաև օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 16.07.2013 թ-ի թիվ 2118764 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 6.722.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով արձանագրվել է, որ թվով 10 ներքոհիշյալ քաղաքացիները ստուգման պահին ընկերությունում փաստացի գործունեություն էին իրականացնում, սակայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված չէին և չունեին կնքված գրավոր աշխատանքային պայմանագրեր գործատուի հետ.

1. Արտիկ Գևորգի Չոբանյան – վարորդ,
2. Ադիբեկ Արտավազգի Մինասյան – վարորդ,
3. Գուրգեն Շուրիկի Սողոմոնյան – վարորդ,
4. Ռուդոլֆ Գառնիկ Ղազարյան – վարորդ,
5. Սարգիս Միերի Սարիբեկյան – վարորդ,
6. Կարեն Գառնիկի Սարգսյան – վարորդ,
7. Ալեքսանդր Կարենի Զախարյան – վարորդ,
8. Սամվել Պատվականի Կնյազյան – վարորդ,
9. Ռաֆայել Ժոռայի Եղիազարյան – վարորդ,
10. Ալբերտ Սարգսյան – վարորդ:

Ընկերության կողմից խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 83-րդ և 14-րդ հոդվածի պահանջները, այն է, աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմերը պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով կնքված աշխատանքային պայմանագրերի հիման վրա: Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 85-րդ հոդվածի և <Եկամտային հարկի մասին> ՀՀ

օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ կետի <դ> ենթակետի՝ աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպելու փաստն արձանագրելու դեպքում գործատուն տվյալ ամսում յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար հաշվարկում և վճարում է եկամտային հարկ՝ 600.000 դրամի չափով, եթե չձևակերպված վարձու աշխատողների քանակը 9-ից ավել է: Արդյունքում, ենթակա է բյուջե վճարման 6.000.000 դրամ:

Իր հերթին, ստուգման ակտի 2-րդ կետով, հիմք ընդունելով <Արտոնագրային վճարների մասին> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի և 9-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջները, արտոնագրային վճարների մասով ենթակա է գանձման 10 մեքենայի համար տուգանք՝ 722.000 դրամի չափով:

<Առմա Հաուս> ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչությունում քննվում է գործ <Առմա Հաուս> ՍՊ ընկերության նկատմամբ գրված ակտի վերաբերյալ: Քննչական վարչության 22.10.2013 թ-ի թիվ 4897/12-2 որոշմամբ ընկերության նկատմամբ գրված ստուգման ակտը համարվել է անհիմն:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է ստուգման ակտը համարել անվավեր և ակտում նշված գումարը գրոյացնել:

Ընկերությունը տեղեկացնում է նաև, որ ստուգման ակտը գրված է եղել ընկերության գործունեությունը դադարեցված լինելու ժամանակահատվածում:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

2013 թ-ի հուլիսի 18-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ-ից ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչություն է ստացվել ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ-ում հաշվառված <Առմա Հաուս> ՍՊ ընկերության նկատմամբ 16.07.2013 թ-ին կազմված թիվ 2118764 ստուգման ակտը և կից նյութերը: ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության քննիչ Ռ.Սարգսյանը, վերանայելով <Առմա Հաուս> ՍՊ ընկերության վերաբերյալ նախապատրաստվող նյութերը 22.10.2013 թ-ին կայացրել է որոշում քրեական գործ հարուցելը մերժելու մասին: Մասնավորապես, նյութերի նախապատրաստմամբ պարզվել է, որ ստուգման ակտում նշված վարորդները ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչությունում բացատրություններ են տվել այն մասին, որ իրականում իրենք տվյալ ժամանակահատվածում <Առմա Հաուս> ՍՊ ընկերության աշխատողներ չեն հանդիսացել ու իրենց կողմից շահագործվող մեքենաներն էլ <Առմա Հաուս> ՍՊ ընկերությանը չեն պատկանել:

Պարզվել է նաև, որ Սարգիս Միերի Սարիբեկյանը, Ալբերտ Արտավազի Սարգսյանը, Սամվել Պատվականի Կնյազյանը և Ռաֆայել Ժորայի Եղիազարյանը վարել են Հրազդան քաղաքի բնակիչ Դավիթ Հրաչիկի Զաքարյանին պատկանող Վազ 21 074 մակնիշի ավտոմեքենաները և վերջինիս յուրաքանչյուրը օրական վճարել է 5000 դրամ, իսկ Արտիկ Գևորգի Զոբանյանը, Ադիբեկ Արտավազի Մինասյանը, Գուրգեն Շուրիկի Սողոմոնյանը, Ռուդոլֆ Գառնիկի Ղազարյանը, Կարեն Գառնիկի Սարգսյանը, Ալեքսանդր Կարենի Զախարյանը վարել են որպես անհատներ և ինչպես

վերջիններս, այնպես էլ Դավիթ Հրաչիկի Զաքարյանը մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման համար թույլտվություն /լիցենզիա/ չեն ունեցել, անհատ ձեռներեց կամ ՍՊԸ աշխատակից չեն հանդիսացել և որևէ վճարում հարկային մարմիններում չեն կատարել:

Արտիկ Գևորգի Չոբանյանի, Ադիբեկ Արտավազի Մինասյանի, Գուրգեն Շուրիկի Սողոմոնյանի, Ռուդոլֆ Գառնիկի Ղազարյանի, Կարեն Գառնիկի Սարգսյանի, Ալեքսանդր Կարենի Զախարյանի և Դավիթ Հրաչիկի Զաքարյանի կողմից առանց պետական գրանցման ձեռնարկատիրական գործունեության իրականացման և այդպիսի գործունեության հետևանքով պետությանը պատճառված վնասի չափը որոշելու համար կազմվել են համապատասխան հաշվարկներ ու վարչական ակտեր: Վարչական ակտերով առանց պետական գրանցման, առանց համապատասխան լիցենզիայի /թույլտվության/ ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար վերոգրյալ անձինք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթարկվել են պատասխանատվության:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնուա է, որ ստուգման ակտում արտացոլված տվյալները, որոնք և հիմք են հանդիսացել ընկերության նկատմամբ լրացուցիչ պարտավորություններ առաջադրելու համար հիմնավոր չեն: Այսինքն, առկա են բավարար հիմքեր ստուգման ակտը չեղյալ համարելու համար:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 21.08.2013 թ-ի թիվ 40/2 որոշմամբ կասեցված վարույթը վերսկսել:

2. Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 16.07.2013 թ-ի թիվ 2118764 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ